

Հավելված №1
 Հայաստանի Հանրապետության հանրային
 ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
 2018 թվականի սեպտեմբերի -ի №--Ա որոշման

«Հավելված №1
 Հաստատված է Հայաստանի Հանրապետության
 հանրային ծառայությունները կարգավորող
 հանձնաժողովի 2010 թվականի
 հոկտեմբերի 6-ի № 523Ա որոշմամբ

**«ՋԻԷՆՄԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերության կողմից գրադեցված
 հանրային ամրակցված հեռախոսային ցանցի տարածաշրջանային կոդերը (NDC) և
 նրանց համարային շարքերը**

Աղյուսակ №1

N	Բնակավայրը	Տարածաշրջանային կոդը (NDC)	Ցանցի վերջնական կետի համարը
1	Երևան	12	2xxxxx, 3xxxxx, 4xxxxx, 5xxxxx, 6xxxxx, 7xxxxx, 8xxxxx, 9xxxxx
2	Ապարան	252	81xxx
3	Ծաղկահովիտ	257	81xxx
4	Աշտարակ	232	81xxx
5	Թալին	249	81xxx
6	Վեդի	234	51/0-4/xx
7	Արարատ	234	51/5-9/xx
8	Արտաշատ	235	81xxx
9	Մասիս	236	81xxx
10	Արմավիր	237	81/0-6/xx
11	Մեծամոր	237	81/7-9/xx
12	Բաղրամյան	233	81xxx
13	Էջմիածին	231	81/0-6/xx
14	Զվարթնոց	231	81/7-9/xx
15	Վարդենիս	269	81xxx
16	Գավառ	264	81xxx
17	Մարտունի	262	81xxx
18	Սևան	261	81xxx
19	Ճամբարակ	265	81xxx
20	Վանաձոր	322	81xxx
21	Սյիտակ	255	81xxx
22	Ստեփանավան	256	81xxx
23	Տաշիր	254	81xxx
24	Ալավերդի	253	81xxx
25	Աբովյան	222	81xxx

26	Եղվարդ	224	81/0-4/xx
27	Նոր Հաճրն	224	81/5-9/xx
28	Հրազդան	223	81/0-4/xx
29	Ծաղկաձոր	223	81/5-9/xx
30	Չարենցավան	226	81xxx
31	Ամասիա	246	81xxx
32	Մարալիկ	242	81xxx
33	Արթիկ	244	81xxx
34	Աշոցք	245	81xxx
35	Գյումրի	312	85/0-8/xxx
36	Ախուրյան	312	859xx
37	Գորիս	284	81xxx
38	Կապան	285	81/0-4/xx
39	Քաջարան	285	81/5-9/xx
40	Մեղրի	286	81/0-4/xx
41	Ագարակ	286	81/5-9/xx
42	Սիսիան	283	51xxx
43	Վայք	282	81xxx
44	Ջերմուկ	287	81xxx
45	Եղեգնաձոր	281	81xxx
46	Դիլիջան	268	81xxx
47	Իջևան	263	81xxx
48	Նոյեմբերյան	266	81xxx
49	Բերդ	267	81xxx

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերության կողմից զբաղեցված հանրային ամրակցված հեռախոսային ցանցի ոչ աշխարհագրական կոդերը և նրանց համարային շարքերը

Աղյուսակ №2

N	Ոչ աշխարհագրական կոդ	Համարային շարքերը
	6046	XXXX
	6071	XXXX
	6072	XXXX
	6073	XXXX
	6074	XXXX
	6075	XXXX

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերության կողմից զբաղեցված միջազգային ազդակների հանգույցի կողերի շարք

Աղյուսակ №3

N		Կողեր
1	Միջազգային ազդակների հանգույցի կող (ISPC)	4-233-2

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերության կողմից զբաղեցված անվճար գանգահարվող (ֆրի ֆոն) և հավելավճարով ծառայությունների համարային շարքերը

Աղյուսակ №4

№	Ծառայության անվանումը	Հեռախոսային ծառայության հասանելիության կողը	Ցանցի վերջնակետային համարը
1	Անվճար գանգահարվող ծառայություններ (ֆրի ֆոն)	800	00700, 00800, 00900, 03030, 04444, 02222, 03333, 04000, 04646, 07777, 09999, 22222, 88888
2	Հավելավճարով ծառայություններ	900	00303, 00404, 00707, 00808, 01000, 01111, 03000, 03030, 00333, 04000, 04646, 05000, 00777

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերության կողմից զբաղեցված հատուկ ծառայության կողերը

Աղյուսակ №5

N	Ծառայության անվանումը	Կարճ կողը
1	Հայաստանի Հանրապետության կառավարության օպերատիվ հեռախոսակապ («թեժ գիծ»)	117
2	Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության օպերատիվ հեռախոսակապ («թեժ գիծ»)	128

Հավելված №2
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2018 թվականի սեպտեմբերի -ի №---Ա որոշման

Հաստատված է Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի
2010 թվականի հոկտեմբերի 6-ի № 523Ա որոշմամբ

**«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերության կողմից
Հայաստանի Հանրապետության տարածքում համարների և կողերի
զբաղեցման**

Պայմանները

**(տրված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2010թ. հոկտեմբերի 6-ի № 523Ա որոշմամբ)**

1. Թույլտվությունում օգտագործված հիմնական հասկացությունները

1. Սույն թույլտվությունում օգտագործված հիմնական հասկացությունները սահմանվում են հետևյալ կերպ՝

- 1) Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը.
- 2) Թույլտվություն ունեցող անձ կամ Լիցենզավորված անձ՝ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերություն.
- 3) Թույլտվություն՝ Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է Լիցենզավորված անձի՝ համարներ և կողեր զբաղեցնելու իրավունքը և պարտականությունը.
- 4) Ֆորս մածոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պատահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. Թույլտվության գործողության ժամկետը

2. Թույլտվությունն ուժի մեջ է մինչև 2028 թվականի դեկտեմբերի 10-ը:

3. Լիցենզավորված անձի գործունեության վայրը

3. Լիցենզավորված անձի գործունեության տարածքն է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը:

4. Լիցենզավորված անձի գործունեության էությունը կազմող գործառույթները

4. Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է արդյունավետ օգտագործել.

1) հանրային ամրակցված հեռախոսային ցանցի տարածաշրջանային կողերը (NDC) և նրանց համարային շարքերը,

2) հանրային ամրակցված հեռախոսային ցանցի 6046, 6071, 6072, 6073, 6074, 6075 ոչ աշխարհագրական կողերը և նրանց «xxxx» համարային շարքերը,

3) միջազգային ազդակների հանգույցի 4-233-2 կոդը,

4) 800 00700, 800 00800, 800 00900, 800 03030, 800 04444, 800 02222, 800 03333, 800 04000, 800 04646, 800 07777, 800 09999, 800 22222, 800 88888, 900 00303, 900 00404, 900 00707, 900 00808, 900 01000, 900 01111, 900 03000, 900 03030, 900 00333, 900 04000, 900 04646, 900 05000, 900 00777 համարները,

5) 117 հատուկ ծառայության կոդը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 117 օպերատիվ հեռախոսակապի («թեժ գծի») ծառայության կազմակերպման նպատակով

6) 128 հատուկ ծառայության կոդը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության օպերատիվ հեռախոսակապի («թեժ գծի») ծառայության կազմակերպման նպատակով:

5. Լիցենզավորված գործունեության պայմանները

5. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, Թույլտվության, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

6. Թույլտվությունը չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
7. Թույլտվության գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:
8. Լիցենզավորված անձը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ապահովել իր կողմից շահագործվող սարքավորումների հուսալիությունն ու անվտանգությունը:
9. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել իր ցանցի բաժանորդների հասանելիությունը դեպի հատուկ ծառայություններ (ուստիկանություն, շտապ օգնություն, հրշեջ ծառայություն և այլն):
10. Համարի կամ կողի զբաղեցման թույլտվություն ունեցող անձն իրավասու է այդ համարը կամ կողը տրամադրել սպառողներին, սակայն իրավունք չունի այդ համարը կամ կողը փոխանցել այլ օպերատորների կամ ծառայություններ մատուցողների:
11. Եթե Թույլտվություն ստանալուց հետո առաջին տարվա ավարտին օգտագործվում է հատկացված համարային շարքի 60 տոկոսից պակաս, ապա օգտագործումը համարվում է ոչ արդյունավետ և Հանձնաժողովը կարող է տրամադրված համարային շարքից հետ վերցնել չօգտագործված համարները: Հատկացված համարների ոչ արդյունավետ օգտագործման դեպքում Հանձնաժողովը կարող է հեռախոսային ծառայություններ մատուցող անձին տրամադրված շարքից հետ վերցնել չօգտագործված համարները:
12. Լիցենզավորված անձի՝ Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությունը հրապարակային է, եթե այն Լիցենզավորված անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չէ որպես «գաղտնապահական տեղեկատվություն»: Հանձնաժողովն իրավասու է ընդունել կամ մերժել նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

13. Լիցենզավորված անձի և հաճախորդների կամ վերջնական օգտագործողների փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերով:
14. Լիցենզավորված անձն իր գործունեությունն իրականացնելիս, պարտավոր է իր տնօրինության կամ տիրապետման տակ գտնվող սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման ընթացքում ապահովել մարդկանց՝ սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության, շրջակա միջավայրի անվտանգությունը:
15. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իր մոտ անցկացված՝ լիցենզավորված գործունեությանը վերաբերող աուդիտորական կամ իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները և արձանագրությունները (ակտերը)՝ համապատասխան գործողությունների ավարտից հետո 10-օրյա ժամկետում:
16. Լիցենզավորված անձը պարտավոր է իր վերակազմակերպման կամ անվանափոխման, կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում այդ փոփոխությունների իրավական ուժ ստանալու օրվանից սկսած 15-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել Հանձնաժողովին՝ կցելով նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը:
17. Լիցենզավորված անձը պարտավոր է ազգային անվտանգության մարմինների պահանջով իր ապարատային միջոցների կազմում ընդգրկել լրացուցիչ սարքավորումներ և ծրագրային միջոցներ, ինչպես նաև անհրաժեշտ պայմաններ ստեղծել ազգային անվտանգության մարմինների կողմից օպերատիվ-տեխնիկական միջոցառումներ անցկացնելու համար:
18. Լիցենզավորված անձը պարտավոր է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ապահովել իրավապահ և ազգային անվտանգության մարմինների աշխատակիցների անարգել մոտեցումը հաղորդակցության սարքավորումներին, ենթակառուցվածքներին, միացնող-անջատող, ուղղորդող և նմանատիպ այլ սարքերին, ներառյալ՝ գաղտնալսումների իրականացման համար անհրաժեշտ սարքերին:

19. Լիցենզավորված անձը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել թույլտվության պայմանների խախտման:

20. Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձը պարտավոր է զարգացնել իր հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցը ժամանակացույցով սահմանված աշխարհագրական տարածքներում՝ ապահովելով հանրային ամրակցված հեռախոսային ծառայությունների մատուցումը.

2016 թվական	2017 թվական	2018 թվական
Հրազդան	Մարտունի	Գորիս
Իջևան	Գյումրի	Սիսիան
Աշտարակ	Արարատ	Ագարակ
Արմավիր	Սևան	Մեղրի
Ալավերդի	Արտաշատ	Ջերմուկ
Աբովյան	Վանաձոր	Վայք
Քաջարան	Մեծամոր	Բաղրամյան
Կապան	Ապարան	Եղեգնաձոր
Դիլիջան	Մասիս	Ծաղկահովիտ
Ծաղկաձոր	Չարենցավան	Գավառ
	Ստեփանավան	Տաշիր
	Աշոցք	Թալին
	Ախուրյան	Մարալիկ
	Արթիկ	Ամասիա
	Սպիտակ	Վեդի
	Վարդենիս	Եղվարդ
	Ճամբարակ	Էջմիածին
	Բերդ	Նոյեմբերյան
		Զվարթնոց

21. Լիցենզավորված անձը պարտավոր է սույն պայմանների 22-րդ կետում նշված բնակավայրերում առկա լարային ենթակառուցվածքների պահպանմամբ շարունակել ապահովել հեռախոսային և լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցումը, իսկ նշված ենթակառուցվածքների շահագործումից հանելու դեպքում՝ այն նախապես համաձայնեցնել Հանձնաժողովի հետ:

6. Գործունեության վերահսկում

22. Թույլտվության պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

23. Թույլտվության պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովի լիազոր ներկայացուցիչներն իրավունք ունեն անարգել մուտք գործել Լիցենզավորված անձի տարածք: Վերահսկումն իրականացնելու ընթացքում Լիցենզավորված անձը պարտավոր է աջակցել Հանձնաժողովին:

7. Պատժամիջոցներ

24. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի պահանջները կամ Թույլտվության պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում, Հանձնաժողովն իրավասու է կիրառել պատժամիջոցներ:

25. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս մաժորի հետևանք են:

8. Թույլտվության դրույթների և պայմանների փոփոխություն

26. Թույլտվության պայմաններում փոփոխություններ կարող են կատարվել Հանձնաժողովի կամ Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

27. Հանձնաժողովի նախաձեռնությամբ թույլտվության պայմաններում փոփոխությունները կատարվում են Լիցենզավորված անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պատշաճ կատարումն ապահովելու համար:

28. Թույլտվության կորստի (կորցնելու, ոչնչանալու և այլն) դեպքում կրկնօրինակի տրամադրման կամ գործողության ժամկետի երկարաձգման անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ մասին հայտ (դիմում) ներկայացնել Հանձնաժողով:

9. Ծանուցում

29. Թույլտվության վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ հաղորդագրությունները Լիցենզավորված անձի կողմից պետք է ներկայացվեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով, պատվիրված նամակով կամ առձեռն հանձնվեն Հանձնաժողով:»: